ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 485-Ա « 12 » ապրիլի 2024 թ.

ՍՏԵՂԾԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի փետրվարի 6-ին հայտարարված՝ Ստեղծարարական ծրագրերի իրականացման բաց մրցույթին ներկայացված հայտերի ուսումնասիրման, գնահատման և արդյունքների ամփոփման նպատակով՝

1. Ստեղծել Ստեղծարարական ծրագրերի իրականացման մրցութային հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի վրա:
3. Կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
12.04. 2024թ.
հ. 485-Ա կարգադրության

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍՏԵՂԾԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Լևոն Հովհաննիսյան	- Երևանի քաղաքապետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Գոշ Սարգսյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ
Գևորգ Սահակյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար
Գարիկ Նազարյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության մշակույթի բաժնի պետ /հանձնաժողովի քարտուղար/
Հայկ Միրզոյան	- Երևան քաղաքի ավագանու անդամ, ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
Տաթևիկ Հովակիմյան	- Երևան քաղաքի ավագանու անդամ, դերասանուհի (համաձայնությամբ)
Սամվել Հովհաննիսյան	- Հայաստանի ազգային պատկերասրահի փոխտնօրեն (համաձայնությամբ)
Արմեն Սարգսյան	– Բանաստեղծ, Երևանյան գրքի միջազգային փառատոնի գեղարվեստկան ղեկավար (համաձայնությամբ)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**